

ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԸՐԺԻՒՔ¹⁾

Աշխարհիս վրայ կայ մի ահազին շարժուն ոյժ, յաճախ ինքնահաւան, դաւաճան ու կոյր, բայց և այնպէս, նշյնկերպ անընկճելի, համարեա՛ թէ տմենազօրեղ՝ բոլոր խելքերի ու հանձարների ապացուցումների վրայ միշտ յաղթող հանդիսացող, —ա՛յդ ոյժը —հասարակական կարծիքն է: Հասարակական կարծիքը և նրանից՝ յաճախ տարօրինակ ու անհասկանալի երկիւղը միասին առած ունին մի ինչոր հիպնոսական մեծ գաղտնիք, որ մարդուն հպատակեցնում են իրենց, կաշկանդում նրա գիտակցութեան աղատութիւնը, զղթայում մարդու անկախութիւնը, մղում նրան դէպի այն ճանապարհը, որի վրայով նա՝ շատ կարելի է և չէ՛ ուզում գնալ, այնուամենայնիւ իր համար աննկատելի կերպով գնում է այդ ճանապարհով:

Եհարկէ, կան և այն տեսակ մարդիկ, որոնք ոչ թէ չեն հպատակում այդ կամակոր չաստուածին՝ որ տարազի համեմատ փոխում է և իր պահանջներն ու գաղափարները, մարդիկ՝ որոնք ո՛չ թէ գնում են հասարակական կարծիքի ետևից, ապա իրենք են հանդիսանում նրա առաջնորդների գերումն Բայց այդ մարդիկ—կամ մաքի ու կամքի ահարկու տիտաններ են, կամ վերին աստիճանի հաստատուն՝ հպա՛րտ սրտեր, շատ անկա՛թ խելքեր, վերին աստիճանի աննկո՛ւն մարտնչողաներ, որոնք յաղթում են հասարակութեանը կամ հրաժարում են նրանից, զգալով իրենց մեջ արհամարհանքի ոյժ դէպի այն բարութիւնները, որոնք բաժին են ընկնում հասարակութեան մեջ ապրող մարդուն՝ իրեւ երախտիք այն բանին, ինչով նա իր աձնական բարժական ու մտաւոր աղատութիւնից այդ հա-

¹⁾ Թարգմանել ենք Լ. Լվովսկիի բրոշիւրից, որը չնչին բացառութիւնով ներկայացնում է Փրանսիացի հոգեբան Թարգի հետաքրքրական կարծիքներն ու մաքերը՝ Ծ. Թ.

սարակութեան համար մասն է հանել, Խակ բոլոր նոքա, որոնք չեն հեռացել կամ հրաժարուել հասարակութիւնից և որոնք չեն օժտւած բաւարար հանձարով, որ կարողանան ներշնչել այդ հասարակութեանը իրենց սեփական՝ նո՞ր և ինքնուրո՞յն տեղած գաղափարներն ու գիտումները,—այդ ամենը որոշ չափով գտնուում են հասարակական կարծիքի հպատակութեան տակ, լինի այդ ծաղրաշարժ երկիւզի կամ որեւ է ուրիշ ձևով:

Ի՞նչ է ներկայացնում այդ զօրեղ ոյժը, որ մէկ ժամանակակից զիտնականի ասելով, ժողովրդի համար նոյնն է, ինչ որ հոգին՝ մարմին համար: Ինչումն է նրա էութիւնը. վնասակա՞ր է նա թէ օգտակար և ինչումն է կայանում նրա օգտակարութիւնը. ինչո՞վ է նա յայտնի և ի՞նչ տեսակի է նրա էլօլիւցիան: Աչա վերին աստիճանի հետաքրքիր ու կարեսոր հարցեր, որոնց դժուար թէ չեն եւ թարկել մարդիկ, որ այս թէ այն կերպ գործ են ունեցել, շփուել են՝ սարսափեցուցիչ թէ չնչին կենսական գործերով— հասարակական կարծիքի հետ: Բայց պոդ հարցերը այնքան էլ հեշտ չեն լուծում: Նթէ լաւ մտածելու լինենք խնդրի էութեան վրայ, — դուրս կդայ, որ հասարակական կարծիքը մէկ շատ բարդ ոյժ է ներկայացնում, որի որոշումը տալու համար կհարկաւորուի նրան հիմնական վերլուծութեան ենթարկել.

Հասարակական կարծիքը ունի իր երկար պատմութիւնը, սեպհական յատուկ դէմքը. «Նրան չպէտք է շփոթել, — ասում է Թարոդը, որ հասարակական կարծիքին նուիրել է մէկ առանձին գլուխ իր «*L'opinion et le soule*²⁾» զրքի մէջ, — սոցիալական ոգու երկու տարբեր կողմերի հետ, որոնք միաժամանակ սնուցանում ու չափաւորում են նրան, միշտ մխտելով նրա տարածողութեան սահմանները: Դրանցից մէկն է աւանդութիւնը, որ կաղմում է՝ այժմ վաղուց արգէն գերեզմանից մարդոց՝ հասարակական կարծիքի ծուծը, այդ՝ անհրաժեշտ ու բարերար նախապաշարմունքների ժառանգութիւնը, որ մեզ՝ ապրողներիս համար շատ անտանելի է: Միան է ա՛յն, ինչ որ ես համառոտութեան համար թոյլ եմ տալիս անուանել խելք՝ հասարական մոտքով: Դրանով ես հասկանում եմ անձնական՝ շատ թէ քիչ հիմնաւոր, և աւելի յաճախ, ընտ-

2) «Անձնաւորութիւն և ամբոխ»:

բուածների անհիմն կարծիքները, մտածող՝ ուրիշներից առանձ նացող մարդոց մտքերը, որ զատուելով ընդհանուր հոսանքից առաջնորդում կամ պաշտպանում են մարդկութիւնը՝ այն է հստարակութիւնը։

Աւանդութիւնները ժողովրդի գիտակցութեան մէջ հստարակական կարծիքից աւելի վաղ են առաջ եկել. ժողովրդի համար մեծ իմաստութիւն կազմող բաներ են, նա՛ ժողովուրդը նոյնպէս աւելի շուտ է հպատակւում, քան հստարակական կարծիքը. հստարակական կարծիքի մասին գաղափար է կազմւում այն մարդու հոգեկան աշխարհի մէջ, որը ապրում է հստարակական կեանքով։

Իսկ երբ հստարակական կարծիքի մասին գաղափար ուշ է կազմւում, այդ գէպքում նա աճում է անհամեմատ շուտ, հպատակեցներով իրեն ե՛ւ աւանդութիւնը ե՛ւ ինելքը. կարծես զուարձանալով ու խաղալով, այդ ահարկու ոյժը սիրում է քանզել սովորական՝ դարերի ընթացքում ժողովրդի համար արիւն ու մարմին դարձած հսկացողութիւններն ու սովորութիւնները, կամ թէ՝ ինքնիրեն հպատակեցներով աւանդութիւնների իշխողութեան, նա՛ սարսափելի, անհաշտ ու սիստեմատիկ կերպով հալածում է ամեն ինչ, որ նո՞ր է՝ ժամանակակի՞ղ է, ունակիթ է անում ամեն թա՞րմ միտք, աւերում է ամեն բարի սկզբունք, ինչպէս այդ կարելի է տեսնել երանելի միջին դարերի բազմաթիւ սխօլաստիկ նախագաշարմունքների, թեթևամտութիւնների, խաւարի ու անհամերատարութեան օրինակներից, երբ ամեն մէկ նոր, տաղանդաւոր, ազատ ու կենդանի միտք կամ գործ ոչնչանում էր անգութ ու անպիտան, անաղնի կերպով։

Այդ երեք ոյժերի, այն է հստարակական կարծիքի, խելքի կամ դատողութեան ու աւանդութեան փոխդարձ կոփեր, — ասում է Թարդը, — նոցա ընդհարումները, մէկի միւսի վրայ յարձակումը, դոցա ունեցած փոխդարձ աղղեցութիւնը, բազմաթիւ ու տարբեր վերաբերմունքները, — այդ ամենը պատութեան հսմար կազմում են ամենահետաքրքրական նիւթեր Հանրական (սոցիալական) կեանքի մէջ չկայ աւելի խորիմաստ ու արդիւնաւոր գործ, քան այդ հակառակում յարմարումի երկար աշխատանքը, որ յաճախ արիւնով է շաղախում։ Աւանդութիւնը միշտ աղջայնական, շրջա-

պատուած է աւելի նեղ՝ ճնշող սահմաններով, բայց անհամեմատ խոր ու հաստատուն է քան հասարակական կարծիքը, որը միշտ թեթև ու անհաստատ է ինչպէս քամի, և քամու նման՝ դիմող ընդարձակուելու, տարածուելու և լինելու միջազգային, ինչպէս դատողութիւնն է:

Մեր ժամանակում հասարակական կարծիքը պյն աստիճան զօրեղացել է, որ կուռւմ է չէ թէ միայն աւանդութեան ապա նաև խելթի՝ դատողութեան հետ էլ:

Հասարակական կարծիքի էութիւնը՝ ինչ լինելը Թարգը որոշում է պյապէս՝ «Հասարակական կարծիքը—կ սրճատն ու շատ թէ քիչ տրամարանական դատողութիւնների հաւաքածու է, պյնպիսի դատողութիւնների, որ համապատասխան են ժամանակի առաջ բերած հարցերին և որոնք բազմաթիւ որինակներով ծնւում առաջանում են միևնոյն երկրի, միևնոյն ժամանակի, միևնոյն հասարակութեան անձնաւորութիւնների մէջ»:

Իշարկէ, ամեն-մէկ անձնաւորութիւն պէտք է պարզ հասկանայ իր դատողութիւնները ուրիշներինի հետ միացնելու անհրաժեշտութիւնը, եթէ ո՛չ, պյդ անձնաւորութիւններից իւրաքանչիւրը չի կարող զգալ իրեն սերտ միազած շրջապատողների հետ, պյլ ընդհակառակն ամենքից հեռացած ու մեկուսացած կդանէ ինքն իրեն.

Եթէ դիմենք պյն հարզին, թէ ի՞նչպէս է առաջ գալիս հասարակական կարծիքը, կտեսնենք որ դորա աղբիւրն է միշտ որևէ և մասնաւոր՝ անձնական կարծիքը, որ երկան է գալիս խօսքով, նամակով, մամուլի միջոցով ու քիչ-քիչ ամենքի սեփականութիւն է դառնում: Հին ժամանակներում պյդ մասնաւոր կարծիքի կամ մտքի ընդհանրանալը՝ «Հասարակական կարծիք» դառնալը կատարւում էր հրապարակական ճառախօսութիւնների, թատրոնների միջոցով. քիչ ուշ—պյդ կազմւում էր մամուլի՝ տպագրական խօսքի միջոցով: «Բայց ամենից առաջ և բոլոր ժամանակներում;—ասում է Թարգը, —պյդ լինում էր և պյժմ լինում է մասնաւոր խօսակցութիւնների միջոցով»: Խօսակցութիւններ, կարծիքների փոխանակութիւններ—ահա՝ թէ որոնք են հասարակական կարծիքի սկզբնաւորութեան ու աճելութեան ամենաառաջին աղբիւրները».

Նոյնպէս շատ հետաքրքիր է հասարակական կարծիքի բաւականին երկար պամութիւնը, որ ինչպէս աշխարհիս վրայ

ամեն ինչ, իր էվոլյուցիան բաշ է տարել երկար դար երեսնթացքում։ Կասկած չէ կարող լինել, որ բարբարոսական ժամանակներում անգամ զյութիւն ունէր հասարակական կարծիքը, բայց նա սաստիկ զանազանւում էր մեր այժմեան հասարակական կարծիքի վրայ ունեցած հասկացողութիւնից։ Կլանի³⁾ ցեղի, հինաւուրց քաղաքի և նոյնիսկ միջին դարերի քաղաքի մէջ ամենը միմեանց հետ անձամբ ծանօթ էին, և մասնաւոր խօսակցութիւնների կամ հրապարակական ճառախօսութիւնների միջոցին ընդհանուրը միտքն էր ամենքի ուղեղը զրաղեցնում, և այդ միտքը նրանց համար չէր ներկայացնում երկնքիդ իշած մի որևէ է հրաշը, անյայտ, անորոշ որ և է բան, և այդ իսկ պատճառով՝ հրաշալի։ իր երևակայութիւնով ամեն մէկը այդ միտքը կապում էր որոշ ձայնի, որոշ յայտնի դիմագծի, ծանօթ անձնաւորութեան հետ, որոնցից էր առաջ զարիս այդ միտքը և որը նրան մի ինչ-որ կենդանի բան էր յայտնում։

Նմանտեսակ փոքր ու սերտ միացած իշխանութեան օրգանիկ հասարակական կարծիքը՝ աւանդութեան ու անձնական մուքի հետ կոռւելու համար մի ահազին յժ է ներկայացնում։ Նա մեծ ազդեցութիւն ունի հասարակական կեանքի մէջ և գլխաւոր դեր է խաղում ժողովուրդ կառավարելու գործում։ Այդ դերը աստիճանաբար կորցնում է իր նշանակութիւնը, որովհետեւ տէրութիւնների մանրանալուց—ինչպէս էր այդ միջին դարերի ժամանակ, երբ ամեն մէկ քաղաք, գիւղաքաղաք կամ աւան երովական գլխաւոր տէրութիւնների մէջ ինքնիրենից ներկայացնում էր մէկ առանձին աշխարհ, իր՝ դրացիների կեանքի հետ թշնամաբար վարուող առանձին կեանքով,— մանրանում է և հասարակական կարծիքը։ Այդ գողուած՝ առանձնացած տեղերից ամեն մէկի մէջ առաջ էր գալիս իր առանձին հասարակական կարծիքը, միմեանց օտար, տարբեր, թշնամական, իսկ խաղաղ ժամանակ՝—միմեանց անուշադիր, փոխադարձ անտարբեր։ Այդ տեղերում՝ քաղաքականութիւնը

³⁾ Կլան—շօտրանդական խօսք է, որ նշանակում է շօտրանդական լեռնազիների ցեղ. այդ ցեղը առաջնորդում էր ժառանգական լորդը թէ խաղաղ և պատերազմական ժամանակ, հին նահապետական իրաւունքներով։

բացառապէս տեղական էր դուրս զալիս... «Այդ ժամանակ գոյութիւն չունէին հանուր կարծիքներ, այլ կային հաղարծիմեանց հետ ոչ մի մշտական կապ չունեցող, առանձին կարծիքներ», — ասում է Թարդը:

Եւ ահա պատմութեան ընմի վրայ երեան է գալիս առաջ զիրբը, իսկ յետոյ մամուլը, և հասարակական կարծիքը կրկին հնարաւորութիւն է ունենում միանալ, զարդանալ և ստանալ ինքնուրցնութիւն։ Առանձին զարեւոր դեր այդ հասարակական կարծիքը վերականդնեցնելու գործի մէջ կատարեց, և հարկէ մամուլը՝ Պարբերական մամուլը հնարաւորութիւն տուեց հառ մերաշխութեամբ տրամադրուած անձնաւորութիւնների այդ առաջին համախմբումին կաղմել իրենից երկրորդական աւելի բարգ միութիւն կամ շաղկապ, որտեղ համախմբում էին երբէք մէկը միւսին չտեսած ու չճանաչող միութիւններ՝ անհատներ։

Երախտապարտ ենք ամենօրեայ լրագրի ձեին հասած տպագրական խօսքին այն բանի համար, որ ամեն զուտ տեղական ինդիր կամ զործ դարձնում է ազգային, երոպական, հառ մաշխարհային, և ամեն ինչ, որ առաջ մնում էր տեղական նեղ շրջանների մէջ՝ օրինակ որևէ է իրարանցում առաջ բերող մնձ լուր, — տպագրական խօսքի միջոցով իսկցին լույսում է ամեն երկիր։ 1/2, դար առաջ այդ տեսակ բանները չեին կարող լինել ընդհանուրի սեփականութիւն ու հետաքրքրել ամբողջ աշխարհը։

Սակայն միւս կողմէց մեծածաւալ մարդկային հասարակութիւնը՝ որ բաժանում է ազգերի, և յետոյ գաւառների, քաղաքների, գիւղաքաղաքների, — մինչև պարբերական մամուլի ծնուելը՝ միշտ ուներ միջազգային կարծիքի նման մի բան, որ գործում էր մեծ տարածութիւնների վրայ. այդ կարծիքների մէջ թագնուած էին լինում միշտ աւելի մեծ դիրք բռնող մասնաւոր ազգայնական և նոյն իսկ նահանգների կարծիքներ... Որքան շատ առաջ գնանք անդեալի մէջ, այնքան աւելի զգալի կլինի տեղական կարծիքի իշխող դեր կատարելը՝ Պարբերական մամուլի գործն էր հանրայնութեան ոդին աստիճանաբար ազգայնացնելու ու նրան աւելի ու աւելի միջազգային դարձնել։

Թարդը ամենօրեայ թերթը նմանեցնում է լուրեր ծծող-

ու ձնշող ջրհան մեքենայի, լուրեր որ ամեն առաւօտ ստացաւ և ուսւ են աշխարհիս ամեն կողմերից և նոյն օրը հաղորդւում երկրիս բոլոր ծայրերին, որտեղ յայտնի է լինում ամեն ինչ, որ իսկապէս հետաքրքրական է այդ լուրերի մէջ կամ լրազրական աշխատակցի հայեցքով՝ նայելով ինչ նպատակի է ծառայում ինը կամ այն խումբը՝ որին աշխատակցում է։ Այսպէս ուրեմն, ներկայ ժամանակում լրագրները հասարակական կարծիքի ճշմարիտ ողկորիչ և ուղղութիւն տուողներն են, մեծ մասամբ ամեն-մէկ կարդացողի ճաշակին՝ խորհրդակցելու ու խօսելու յարմար բազմաթիւ նիւթեր մատակարարելով։ «Բաւական է միայն մէկ դրիչը, բացականչում է Թարդը, — որ շարժեցնէ միլիոնաւոր լեզուներ»։

Տպագրական գործի սողիալապէս աճման հետ աճում է և միջազգայնութիւնն ու ազգայնութիւնը։ Այդ երկու սկզբանք-ները թւում է որ մէկը միւսին հակադէմ է, բայց եմէ ուշադիր լինենք, կտեսնենք՝ որ երեազող հակադիմութիւնը իսկոյն կոչնչանայի։ Պարզ է, որ այն ժամանակ, երբ տեղի էր ունենում փոխանակութիւն ապրանքներով, մտքերով, խօսքերով ու ամեն տեսակ օրինակներով դրացի ու միմեանցից հեռու ընակուղ աղքերի հետ, — դրա հետ միասին և ժամանակապէս լըրագրների շնորհի, ներկայ դէպրում ամեն մէկ ազգի անհատականութեան մէջ՝ որոնք խօսում են միւսնոյն լեզուով, մտքերի փոխանակութիւնը անհամեմատ մեծ յաջողութիւն էր ունենում։ Այսպէս՝ թէպէտ ազգերի մէջ բացարձակ տարբերութիւնը դրանով պակասում էր, սակայն ամենքից ընդունուած վերաբերմունքի զանազանութիւնը՝ աւելանում էր Թարդի ասելով աղքային կեանքը ամենից աւելի բոցավառում են լրագերները, և այդ դէպրում զիրքը չէ կարող մրցել նրանց հետ։ Լըրազիրը միշտ ձեռք է տալիս ամենանոր, ժամանակակից, գործնական բաներին, մինչդեռ գիրքը աշխատում է զբաղեցնել կարդացողին իր տուած որոշ մոտքերի կենդրանացումով։ Լրագիրը աւելի մօտիկ, մատչելի ու անհրաժեշտ է. գիրքը կրթում է կամ մտադրութիւն ունի կրթելու որոշ գաղափարներ, առաջացնել յայտնի մտաւոր հոսանքներ։ լրագիրը հետաքրքրում է միայն օրուայ բոպէական ամենանհրաժեշտ հարցով, — այդ պատճառով նա մատչելի է ամենին և նոյն իսկ ոչ զարգացած մարդու։ Լրագիրն ու միայն լրագիրն է կազ-

մում այն զօրեղ հեղեղի արտայսյտիչը, որ «հասարակական կարծիք»¹⁾ է կոչում։ Սրանից երևում է, թէ ինչ տեսակ կրթող զյժ կարող էր լինել նա, եթէ կամենարք Առ պյժմ ամենօրեայ մամուլի մեծ մասը՝ ինքն է յարմարուում հասարական կան կարծիքին ու իր վրայ է առնում նրա արտայսյտութեան ու տարածելու դերը. բայց տպագրական խօսքը համարձակ կարող էր և առաջնորդ լինել ու իր յետեից տանելով հասարական կարծիքը՝ բիշ բիշ բարձրացնել նրան վսեմ դաշտարժների ո՛ր աստիճանին էլ որ կամենարք։

Մոսկուա,

1) Սակայն ո՛չ հայերի մէջ։ ԽՄԲ.